

Վեճերի կարգավորումը ԱՀԿ-ում

Ներածություն

ԱՀԿ-ի գործունեության 13 տարիների ընթացքում ավելի քան 300 առևտրային վեճեր են քննվել, որոնցից շուրջ 130-ի վերաբերյալ վեճերի կարգավորման մարմինը (ՎԿՄ) վճիռ է կայացրել: Վեճերի կարգավորման ներկայումս գործող համակարգը, սակայն, ավելի հին է, քան ԱՀԿ-ն: Այն ձևավորվել է ՄԱԳՀ-ի շրջանակում:

Վեճերի կարգավորման մեխանիզմը միջազգային առևտրային համակարգի գործունեությունն ապահովող հենասյուններից է: Նման մեխանիզմի բացակայության դեպքում երկրները կխախտեին իրենց պարտավորությունները ու քանի որ որևէ հակազդող միջոց չէր լինի, ապա միջազգային առևտրային համակարգը պարզապես կդադարեր գործել:

Վեճերի կարգավորման համակարգի շնորհիվ հավասարակշռվում են փոքր և մեծ երկրների դիրքերը, քանի որ վեճերը կարգավորվում են ըստ սահմանված կանոնների և ոչ թե ուժի դիրքերից: Այդ համակարգի շնորհիվ միջազգային առևտրային համակարգը դառնում է ավելի կայուն և կանխատեսելի, քանի որ այն երկրներին պարտադրում է «պարտադրում» պարտավորությունների կատարումը:

Իրավունքների և պարտավորությունների պաշտպանություն

Վեճ սովորաբար առաջանում է, երբ ԱՀԿ անդամ երկրներից մեկը սկսում է կիրառել այնպիսի քաղաքականություն, որը այլ անդամի կամ անդամների կարծիքով չի համապատասխանում այդ երկրի ստանձնած պարտավորություններին: Այդ դեպքում երկիրը, որը համարում է, որ իր շահերը խաթարվել են (բողոքող երկիր), կարող է դիմել ՎԿՄ-ին՝ պահանջելով պարտավորությունները խախտած երկրի կողմից (պատասխանող երկիր) իր պարտավորությունների կատարում:

Որպես առաջին քայլ, սակայն, կողմերը (բողոքող և պատասխանող երկրները) պետք է բանակցեն՝ այդ եղանակով փորձելով հարթել վեճը: Եթե բանակցությունները ձախողվում են, ապա բողոքող երկրի ներկայացրած պահանջը՝ սահմանված կանոնների հիման վրա քննվում է անկախ քննախմբի կողմից: Եթե պարզվում է, որ պատասխանող երկիրը իր ստանձնած պարտավորությունները իսկապես խախտել է, ապա ցանկալի տարբերակը այն է, որ խախտող երկիրը իր քաղաքականությունը համապատասխանեցնի ստանձնած պարտավորություններին: Սակայն, եթե խախտող երկիրը հրաժարվում է դա անել, ապա ՎԿՄ-ն բողոքող երկրին կարող է արտոնել կիրառել հակամիջոցներ (օրինակ՝ մաքսեր կամ քվոտաներ սահմանել¹): Ընդ որում՝ հակամիջոցների կիրառումը դիտարկվում է որպես ժամանակավոր միջոց, մինչև խախտող երկրի կողմից իր պարտավորությունների կատարումը:

Նկատենք, որ վեճերի կարգավորման մեխանիզմը կարևոր է նաև պատասխանող երկրի համար: ԱՀԿ-ն հնարավորություն է տալիս այդ երկրին՝ բացատրել և հիմնավորել իր կողմից կիրառվող քաղաքականության համապատասխանությունը ստանձնած պարտավորություններին: Դրանով իսկ կարգավորման մեխանիզմը թույլ է տալիս պաշտպանել ԱՀԿ անդամների իրավունքներն ու պարտավորությունները:

¹ Բարեբախտաբար հակամիջոցները չեն ներառում իր պարտավորությունները խախտած երկրի ուժակոծումը:

Իրավունքների և պարտավորությունների մեկնաբանություն

ԱՀԿ-ի պայմանագրերում երկրների իրավունքները և պարտավորությունները ոչ միշտ են հստակորեն սահմանված: Նմանօրինակ միջազգային պայմանագրերում իրավական ձևակերպումները որպես կանոն կատարվում են այնպես, որ բոլոր հնարավոր դեպքերի համար կիրառելի լինեն, քանի որ բոլոր հնարավոր դեպքերը առանձին-առանձին նախատեսել հնարավոր չէ: Բացի այդ միջազգային պայմանագրերը փոխադարձ զիջումների արդյունք են և, որպեսզի դրանք բոլոր կողմերի համար ընդունելի լինեն, ձևակերպումները հաճախ տրվում են այնպես, որ կարելի լինի մեկնաբանել տարբեր ձևերով՝ ում ինչպես ցանկալի է:

Հետևաբար՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում հնարավոր է պարզել՝ պարտավորությունները խախտվել են, թե ոչ, միայն այն բանից հետո, երբ *իրավական ձևակերպումներին տրվի մեկնաբանություն*:

Սակայն, «ԱՀԿ-ի ստեղծման Մարաքեշի համաձայնագրի»² (ԱՀԿ-ի համաձայնագիր) Հոդված 9:2-ը ուղղակիորեն նշում է, որ միայն Նախարարական համաժողովը և Գլխավոր խորհուրդը «մեկնաբանության բացառիկ իրավասություն ունեն»: Իսկ ՎԿՓ-ի³ Հոդված 3:2-ը նշում է, որ մեկնաբանությունը պետք է լինի «միջազգային հանրային իրավունքի ընդունված կանոններին համապատասխան»:

Հետևաբար՝ ԱՀԿ-ի համաձայնագրի Հոդված 9:2-ը պետք է հասկանալ այն կերպ, որ «մեկնաբանության բացառիկ իրավասությունը» վերաբերում է այն մեկնաբանություններին, որոնք ընդհանուր կիրառություն ունեն: Իսկ քննախմբերի մեկնաբանությունը վերաբերում է միայն կոնկրետ վեճի առարկային ու վեճի մասնակիցներին:

Ինչ վերաբերում է «միջազգային հանրային իրավունքին», ապա «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի համաձայնագրի (ընդունվել է 1969թ-ին, Հայաստանը անդամակցել է 2005թ-ին) Հոդված 31-ը, 32-ը և 33-ը սահմանում են պայմանագրերի մեկնաբանման ընդհանուր կանոնները: ՎԿՓ-ի Հոդված 3:2-ը թեպետ ուղղակիորեն Վիեննայի համաձայնագիրը չի վկայակոչում, սակայն Բողոքարկման մարմինը իր մի շարք զեկույցներում ուղղակիորեն նշել է⁴, որ Վիեննայի համաձայնագիրը կարող է ծառայել որպես հիմք՝ մեկնաբանությունների համար:

Վիեննայի համաձայնագրի նշյալ երեք հոդվածներն են.

Հոդված 31. Մեկնաբանման ընդհանուր կանոնը

1. Պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի հասկացությունների՝ դրանց՝ համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաև պայմանագրի առարկայի և նպատակի լուսի ներքո:

2. Պայմանագրի մեկնաբանման նպատակով համատեքստը, բացի տեքստից, ներառյալ՝ նախաբանը և հավելվածները, ընդգրկում է.

ա) պայմանագրին վերաբերող ցանկացած համաձայնություն, որը կայացվել է բոլոր մասնակիցների միջև՝ կապված պայմանագրի կնքման հետ,

բ) ցանկացած փաստաթուղթ, որը կազմվել է մեկ կամ մի քանի մասնակիցների կողմից՝ կապված պայմանագրի կնքման հետ, և մյուս մասնակիցների կողմից ընդունվել է որպես պայմանագրին վերաբերող փաստաթուղթ:

3. Համատեքստի հետ միաժամանակ հաշվի են առնվում.

² ԱՀԿ-ի հիմնադիր պայմանագրի պաշտոնական անվանումն է:

³ Վեճերի կարգավորումը ղեկավարող կանոնների և ընթացակարգերի մասին փոխհամաձայնություն, կարճ՝ Վեճերի կարգավորման փոխհամաձայնություն (ՎԿՓ):

⁴ Բողոքարկման մարմնի զեկույց, ԱՄՆ – բենգին, 1996, էջ 23: Բողոքարկման մարմնի զեկույց, Ճապոնիա – ալկոհոլ 2րդ, 1996, էջ 104:

- ա) պայմանագրի մեկնաբանման կամ դրա դրույթների կիրառման վերաբերյալ մասնակիցների միջև հետագա ցանկացած համաձայնություն,
- բ) պայմանագրի կիրառման հետագա պրակտիկան, որը սահմանում է դրա մեկնաբանման վերաբերյալ մասնակիցների համաձայնությունը,
- գ) մասնակիցների հարաբերություններում կիրառվող միջազգային իրավունքի ցանկացած համապատասխան նորմ:

4. Հասկացությունը տրվում է հատուկ նշանակություն այն դեպքում, եթե սահմանվել է, որ մասնակիցները նման մտադրություն են ունեցել:

Հոդված 32. Մեկնաբանման լրացուցիչ միջոցներ

31-րդ հոդվածի կիրառումից բխող նշանակությունը հաստատելու կամ որոշելու նպատակով կարելի է դիմել մեկնաբանման լրացուցիչ միջոցների, այդ թվում նախապատրաստական նյութերին և պայմանագրի կնքման հանգամանքներին, երբ 31-րդ հոդվածին համապատասխան մեկնաբանումը

- ա) նշանակությունը թողնում է երկիմաստ կամ անհասկանալի, կամ
- բ) հանգեցնում է բացարձակ անհեթեթ կամ անմիտ արդյունքի:

Հոդված 33. Պայմանագրերի մեկնաբանումը, որոնց տեքստի բնագիրը սահմանվել է երկու կամ մի քանի լեզուներով

1. Եթե պայմանագրի տեքստի բնագիրը սահմանվել է երկու կամ մի քանի լեզուներով, յուրաքանչյուր լեզվով տեքստն ունի միևնույն ուժը, եթե պայմանագրով չի նախատեսված կամ դրա մասնակիցների կողմից չկա պայմանավորվածություն առ այն, որ այդ տեքստերի միջև տարբերությունների դեպքում առավելություն կունենա որևէ որոշակի տեքստ:

2. Պայմանագրի ոչ այն լեզվով տարբերակը, որի համար սահմանվել է տեքստի բնագիր լինելը, համարվում է բնագիր միայն այն դեպքում, եթե դա նախատեսված է պայմանագրով, կամ եթե դրա մասին պայմանավորվել են պայմանագրի մասնակիցները:

3. Ենթադրվում է, որ յուրաքանչյուր բնագիր տեքստում պայմանագրի հասկացություններն ունեն միատեսակ բովանդակություն:

4. Բացառությամբ այն դեպքերի, երբ 1-ին կետի համաձայն առավելություն ունի որևէ մեկ որոշակի տեքստ, եթե բնագիր տեքստերի համեմատումից հայտնաբերվում են բովանդակության տարբերություններ, որոնք չեն վերանում 31-րդ և 32-րդ հոդվածները կիրառելիս, ընդունվում է այն բովանդակությունը, որը, պայմանագրի առարկան և նպատակները հաշվի առնելով, առավել լավ է համաձայնեցնում այդ տեքստերը:

Այսպիսով՝ ԱՀԿ-ի համաձայնագրերը պետք է մեկնաբանվեն բառերի սովորական նշանակությանը համապատասխան՝ հաշվի առնելով համատեքստը և պայմանագրերի առարկան ու նպատակը: «Համատեքստ» բառի բառարանային բացատրությունը հետևյալն է՝ «գրվածքի մասը կամ մասերը, որոնք նախորդում կամ հաջորդում են որևէ բառի կամ բառերի խմբի և դրանով իսկ անմիջականորեն կապված են նրանց հետ, այնպես որ կարող են բացահայտել նրանց իմաստը»⁵: Հետևաբար՝ որևէ հասկացության մեկնաբանման համար անհրաժեշտ է հաշվի առնել պայմանագրի կառուցվածքը, բովանդակությունը, ինչպես նաև այլ դրույթներում կիրառվող հասկացությունները, հատկապես այն դրույթներում, որոնք նախորդում և հաջորդում են մեկնաբանման ենթակա հասկացությանը: «Առարկան և նպատակը» վերաբերում են մեկնաբանման ենթակա հասկացության կամ ամբողջ պայմանագրի՝ ուղղակիորեն նշված կամ ենթադրվող նպատակին:

Գործնականում քննախմբերը և Բողոքարկման մարմինը նախապատվություն են տալիս սովորական նշանակությանը և համատեքստին և ոչ թե առարկային ու նպատակին: Ինչ վերաբերում է ԱՀԿ համաձայնագրերի բանակցման պատմությանը, ապա դա կարող է ծառայել սույն մեկնաբանման օժանդակ միջոց: Իսկ լեզվի իմաստով ԱՀԿ համաձայնագրերը բնագրային են անզլերենով, ֆրանսերենով և իսպաներենով:

⁵ Merriam-Webster's Unabridged Dictionary

«Նախընտրելի կարգավորումը» «փոխհամաձայնեցված կարգավորումն է»

Թեպետ վեճերի կարգավորման մեխանիզմի նպատակը այն անդամի իրավունքների պաշտպանությունն է, որի շահերը խաթարվել են, բայց և այնպես առաջնային է համարվում ոչ թե վճռի կայացումը, այլ վեճի փոխհամաձայնեցված կարգավորումը՝ ԱՀԿ–ի պայմանագրերին համապատասխան (ՎԿՓ 3:7): Վճռի կայացումը պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ կողմերը չեն կարողանում փոխհամաձայնեցված կարգավորում գտնել:

Պարտադիր պայմանը, որ վեճի ֆորմալ դիտարկումից առաջ կողմերը բանակցեն, միտված է նրան, որ կողմերը առնվազն փորձեն գտնել փոխհամաձայնեցված կարգավորում: Ավելին, նույնիսկ երբ վեճը գտնվում է ֆորմալ դիտարկման փուլում, եթե կողմերը զալիս են փոխհամաձայնեցված կարգավորման, ապա վեճի քննումը անմիջապես դադարեցվում է (ՎԿՓ 3:7):

Պատասխանող երկիրը պարտավոր է պատրաստակամորեն արձագանքել բողոքող երկրի պահանջին և բանակցությունների միջոցով փորձել կարգավորել վեճը: Բանակցությունները գաղտնի են և դրանց բովանդակությունը հայտնի չի դառնում ոչ մամուլին, ոչ քննախմբին (եթե այն ստեղծվի): Բանակցությունների պահանջին պատասխանող երկիրը պարտավոր է արձագանքել 10 օրում և բանակցությունները պետք է սկսվեն ոչ ուշ, քան 30 օրում: Եթե պատասխանող երկիրը խախտում է այս ժամկետներից որևէ մեկը, ապա բողոքող երկիրը կարող է պահանջել քննախմբի անհապաղ ստեղծում: Գործնականում, սակայն, երկրները դրական են արձագանքում բանակցությունների պահանջին: Եթե 60 օրվա ընթացքում (հաշված բանակցություններ սկսելու պահանջի ներկայացման օրվանից) բանակցությունները որևէ դրական արդյունք չեն տալիս, ապա բողոքող երկիրը իրավունք ունի պահանջել քննախմբի անհապաղ ստեղծում:

Վեճերի շտապ կարգավորում

Վեճերի կարգավորման մեխանիզմի նպատակը ոչ միայն վեճերի կարգավորումն է, այլև՝ շտապ կարգավորմանը (ՎԿՓ 3:3): Արդարադատությունը արդյունավետ է ոչ միայն, երբ արդար է, այլև՝ արագ է: ՎԿՓ–ն նախատեսում է, որ ՎԿՄ–ի վճիռը պետք է կայացվի ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում: Իսկ բողոքարկման դեպքում՝ ոչ ավել, քան 16 ամիս անց (ՎԿՓ 20): Եթե հաշվի առնենք նաև վճռի իրականացման ժամանակը, ապա վճռի փաստացի կարգավորումը կարող է տևել անհամեմատ երկար: Այդ ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում կրած վնասների համար, սակայն, բողոքող երկիրը որևէ փոխհատուցում չի ստանում:

Միակողմանի գործողությունը արգելվում է

ԱՀԿ անդամները պայմանավորվել են, որ վեճերը պետք է կարգավորեն բացառապես ՎԿՄ–ի միջոցով և ոչ մի դեպքում երկրները չպետք է դիմեն միակողմանի գործողությունների (ՎԿՓ 23):

Նման մոտեցումը էապես տարբերվում է ավանդական մոտեցումից: Միջազգային իրավունքի ավանդական մոտեցմամբ, եթե որևէ երկիր խախտում է իր պարտավորությունները, ապա այն երկիրը, որը տուժել է, կարող է կիրառել հակամիջոցներ՝ պնդելով, որ իր հակամիջոցները օրինական են: Սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, արդյունքում վեճը ավելի է խորանում, քանի որ առաջին երկիրը ի պատասխան կիրառում է հակա–հակամիջոցներ: Արդյունքում վեճը վերածվում է «առևտրային պատերազմի»:

Նման սցենարից խուսափելու համար ՎԿՓ-ն պահանջում է, որ երկրները իրենց վեճերը կարգավորեն բացառապես վեճերի կարգավորման համակարգի միջոցով: Նշենք, որ վերջին հաշվով ՎԿՄ-ն կարող է այն երկրին, որի շահերը վնասվել են, արտոնի կիրառել հակամիջոցներ (ՎԿՓ 23:2(բ) և (գ)), սակայն դա կլինի սահմանված կանոնների շրջանակում:

ՎԿՄ-ն միակ մարմինն է, որի միջոցով կարելի է կարգավորել առևտրային վեճերը:

Վեճի կողմերը

Որպես վեճի կողմ կարող են հանդես գալ բացառապես երկրների կառավարությունները: Ընկերությունները, անհատ անձիք, հասարակական կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները կամ ԱՀԿ-ի քարտուղարությունը վեճի կողմ չեն կարող լինել: Թեպետ ընկերությունների կամ անհատ անձանց շահերը կարող են անուղղակիորեն ներկայացվել համապատասխան կառավարությունների կողմից:

Վեճերի կարգավորման պրոցեսում ներգրավված մարմինները

Վեճերի կարգավորման պրոցեսում ներգրավված մարմիններն են վեճի կողմ երկրները, որպես երրորդ կողմ հանդես եկող երկրները, քննախումբը, բողոքարկման մարմինը, ԱՀԿ քարտուղարությունը, արբիտրները, անկախ փորձագետները, մասնագիտացված հաստատությունները:

Վեճերի կարգավորման մարմին

ՎԿՄ-ն, ինչպես Գլխավոր խորհուրդը, բաղկացած է ԱՀԿ բոլոր անդամ երկրների ներկայացուցիչներից: ՎԿՄ-ն իրականացնում է վեճերի կարգավորման համակարգի վերահսկումը:

ՎԿՄ-ն լիազորված է կազմավորել քննախումբ, հաստատել քննախմբի և Բողոքարկման մարմնի ղեկույցները, վերահսկել վճիռների իրականացումը և արտոնել պարտավորությունների դադարեցումը (այսինքն՝ պատասխան քայլերի կիրառումը):

ՎԿՄ-ի որոշումները ընդունվում են կոնսենսուսով: Սակայն՝ քննախումբ ստեղծելու, քննախմբի և Բողոքարկման մարմնի ղեկույցները հաստատելու և պարտավորությունների դադարեցումը արտոնելու որոշումները ընդունվում են բացասական կոնսենսուսով: Այսինքն՝ նշյալ դեպքերում ՎԿՄ-ն մերժում է որոշումը միայն, եթե բոլորը դեմ են: Այսինքն՝ նույնիսկ եթե մեկ երկիրը կողմ է, ապա որոշումը ընդունվում է: Հետևաբար՝ ցանկացած երկիր, որը ցանկանում է, որ քննախումբ ստեղծվի իր կողմից ներկայացված հայցը քննելու համար, կամ որ քննախմբի ղեկույցը ընդունվի, կամ որ իրեն պատասխան քայլեր կիրառելու արտոնություն տրվի, ապա բավարար է, որ հարցը մտցնի օրակարգ ու դրանից հետո իր իսկ կողմից ներկայացված հարցին դեմ չքվեարկի (ԱՀԿ յուրաքանչյուր անդամ կարող է ՎԿՄ-ի հերթական նիստի օրակարգ մտցնել իրենց հետաքրքրող հարցը, այդ մասին նիստից 11 օր առաջ (12 կամ 13 օր առաջ, եթե 11-րդ օրը շաբաթ է կամ՝ կիրակի) գրավոր ծանուցելով այդ մասին): Բացասական կոնսենսուսի սկզբունքը արմատապես տարբերվում է ՄԱԳՀ-ում կիրառված մոտեցումից, երբ նշյալ հարցերի ընդունման համար անհրաժեշտ էր դրական կոնսենսուս:

Քննախմբեր

Քննախմբերը կիսադատական մարմին են՝ կոչված վեճի կարգավորման նպատակով վճռի կայացմանը: Դրանք սովորաբար կազմված են երեք փորձագետներից: Քննախմբերը

մշտական գործող մարմին չեն: Յուրաքանչյուր կոնկրետ վեճի կարգավորման նպատակով ստեղծվում է հատուկ քննախումբ, որի անդամները որպես կանոն չեն կրկնվում: Քննախմբի անդամներ կարող են լինել ԱՀԿ-ում՝ անդամ երկրների նախկին ներկայացուցիչները, ԱՀԿ քարտուղարության նախկին անդամները, միջազգային առևտրային իրավունք կամ քաղաքականություն դասավանդող կամ այդ թեմաներով հրապարակումներ ունեցող անձիք:

Յուրաքանչյուր քննախումբ պետք է ուսումնասիրի կոնկրետ վեճի հետ կապված փաստերը և խնդրի իրավական ասպեկտները ու ներկայացնի զեկույց, որը պետք է պարունակի քննախմբի եզրակացությունը՝ արդյոք բողոքարկող երկրի պահանջները հիմնավորված են, թե՛ ոչ: Եթե քննախումբը պարզում է, որ պատասխանող երկիրը իսկապես խախտել է իր պարտավորությունները, ապա ներկայացնում է առաջարկություն, թե ինչպես պատասխանող երկիրը իր քաղաքականությունը համապատասխանեցնի իր պարտավորություններին:

Բողոքարկման մարմին

Ի տարբերություն քննախմբերի՝ Բողոքարկման մարմինը մշտական գործող մարմին է, որը ուսումնասիրում է քննախմբի զեկույցի իրավական կողմը: Բողոքարկման մարմինը երկրորդ և վերջին փուլն է՝ վեճերի լուծման ընթացակարգում: Բողոքարկման մարմինը Ուրուգվայի փուլի էական նորություններից մեկն է. ՄԱԳՀ-ում նման մարմին գոյություն չուներ:

Բողոքարկման մարմնի ստեղծման պատճառներից մեկն այն էր, որ քննախմբի եզրակացությունների ընդունումը ՎԿՄ-ի կողմից ԱՀԿ-ում, ի տարբերություն ՄԱԳՀ-ի, գործնականում ավտոմատ է: Այդ պատճառով ստեղծվեց նաև երկրորդ փուլ՝ քննախմբի վճիռներում իրավական սխալները բացառելու համար: Իսկ քանի որ Բողոքարկման մարմինը գործում է մշտական (անդամները նշանակվում են չորս տարով, կարող են մեկ անգամ վերընտրվել, նշանակվում են ՎԿՄ-ի կողմից, կոնսենսուսով), ապա այն ապահովում է վճիռների իրավական համապատասխանությունը մեկը մյուսին և ԱՀԿ պայմանագրերին:

Վեճը Բողոքարկման մարմնի կողմից դիտարկվում է միայն այն դեպքում, երբ վեճի կողմ երկրներից մեկը այդպես պահանջում է: Բողոքարկման մարմինը կարող է մերժել կամ փոխել քննախմբի իրավական եզրահանգումները:

Արբիտրներ

Ի լրումն քննախմբերի և Բողոքարկման մարմնի՝ վեճի կարգավորման որոշ փուլերում կողմերը կարող են դիմել արբիտր(ներ)ի: Արբիտր(ներ)ին կարելի է դիմել քննախմբի կամ Բողոքարկման մարմնի փոխարեն, թեպետ առ այսօր այդ հնարավորությունը գրեթե չի օգտագործվել: Արբիտր(ներ)ի վճիռները չեն կարող բողոքարկվել:

Առավել հաճախ արբիտրներին դիմում են հետևյալ երկու դեպքերում: Երբ քննախմբի զեկույցը արդեն ընդունվել է ՎԿՄ-ի կողմից և պատասխանող կողմը պարտավորվել է կատարել ՎԿՄ-ի վճիռը, ապա կողմերը կարող են դիմել արբիտրին, որպեսզի նա սահմանի վճիռի կատարման «խելամիտ ժամանակահատված»: Արբիտրին կողմերը կարող են դիմել նաև այն դեպքում, երբ պատասխանող կողմը, որը հրաժարվում է կատարել վճիռը, համաձայն չէ իր դեմ կիրառվող հակամիջոցների հետ և համարում է, որ դրանք չափից ավելի խիստ են:

Փորձագետներ

Վեճերը հաճախ կապված են խրթին տեխնիկական կամ գիտական բնույթի խնդիրների հետ: Օրինակ՝ որքանով է կոնկրետ ապրանքը վտանգավոր կյանքին և առողջությանը:

Քննախմբերը կարող են մասնագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել փորձագետների: Ավելին՝ որոշ դեպքերում քննախմբերը պարտավոր են դիմել փորձագետների, մասնավորապես, երբ խնդիրը առնչվում է սանիտարական և ֆիտոսանիտարական միջոցների մասին, առևտրի տեխնիկական արգելքների մասին, լրավճարման և հակազդող միջոցների մասին, մաքսային արժեքի որոշման մասին պայմանագրերի որոշ հոդվածների:

Փորձագետները ունեն սուկ խորհրդատվական ձայնի իրավունք: Քննախումբը սեփական հայեցողության կարող է ընդունել կամ չընդունել փորձագետների եզրակացությունը:

Վեճերի տիպերը

ՄԱԳՀ-ի Հոդված 23:1-ը սահմանում է այն պայմանները, որոնց դեպքում ԱՀԿ անդամ երկիրը կարող է դիմել ՎԿՄ-ին:

Եթե որևէ երկիր համարում է, որ ԱՀԿ պայմանագրերով իրեն ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասնող որևէ օգուտ զրոյացվել է կամ նվազեցվել է կամ ԱՀԿ պայմանագրերի նպատակներից որևէ մեկի իրականացումը խոչընդոտվում է

ա) մեկ այլ երկրի՝ ԱՀԿ-ով սահմանված իր պարտավորությունները չկատարելու հետևանքով, կամ

բ) մեկ այլ երկրի կողմից՝ որևէ միջոց կիրառելու հետևանքով, անկախ նրանից, դա հակասում է ԱՀԿ-ին, թե՛ ոչ, կամ

գ) որևէ այլ իրավիճակի գոյության հետևանքով, ապա

այդ երկիրը կարող է դիմել ՎԿՄ-ին⁶:

Խախտման բողոք: ԱՀԿ վեճերի բացարձակ մեծամասնությունը կապված է «պարտավորությունները չկատարելու» հետ, որի հետևանքով «հասնող օգուտը զրոյացվել կամ նվազեցվել է»:

Չխախտման բողոք: Տեսականում վեճերը կարող են կապված լինել նաև պարտավորությունները չխախտելու հետ, քանի որ Հոդված 23:1(բ)-ն ուղղակիորեն նշում է, որ բողոք կարելի է ներկայացնել՝ «անկախ նրանից, դա հակասում է ԱՀԿ-ին, թե՛ ոչ», եթե «հասնող օգուտը զրոյացվել կամ նվազեցվել է»: Չխախտման բողոքի վրա հիմնված վեճեր ԱՀԿ-ի շրջանակում չեն եղել: ՄԱԳՀ-ի շրջանակում եղել են 14 նման վեճեր, որոնցից 6-ում քննախմբի եզրակացությունը եղել է հոգուտ բողոքող կողմի, սակայն դրանցից միայն 3-ի համար է ՄԱԳՀ-ի Գլխավոր խորհուրդը ընդունել քննախմբի եզրակացությունը (հիշենք, որ ՄԱԳՀ-ի շրջանակում նման որոշումները ընդունվում էին դրական կոնսենսուսով):

Իրավիճակի բողոք: Երրորդ տիպի վեճերը՝ «իրավիճակի գոյության հետևանքով» օգուտի զրոյացումը կամ նվազեցումը, բառացիորեն նշանակում է, որ ցանկացած դեպքում կարելի է հարուցել վեճ, եթե առկա է «հասնող օգուտի զրոյացում կամ նվազեցում»: Առ այսօր նման բնույթի որևէ վեճ ԱՀԿ-ում չի հարուցվել:

Խախտման բողոք

Եթե քննախումբը և Բողոքարկման մարմինը պարզում են, որ երկիրը խախտել է ԱՀԿ պայմանագրերով իր ստանձնած պարտավորությունները, որի արդյունքում բողոքող երկրին

⁶ Հոդված 23-ի բնագիր տեքստը ներկայացված է կրճատումներով և պարզեցումներով:

ուղղակիորեն կամ անուղղակիորեն հասնող օգուտը գրոյացվել կամ նվազեցվել է, ապա բողոքող երկիրը վեճը շահում է:

Գործնականում առաջին պայմանը՝ պարտավորությունների խախտումը, ավելի մեծ կշիռ ունի, քան երկրորդը՝ օգուտի գրոյացումը կամ նվազեցումը: Քանի որ «ենթադրվում է», որ օգուտը գրոյացվել կամ նվազեցվել է, եթե պարտավորությունները խախտվել են (ՎԿՓ 3:8): Որոշ դեպքերում երկրները, որոնց՝ պարտավորությունները խախտելու մեղադրանք է ներկայացվել, փորձել են հիմնավորել, թե օգուտը չի գրոյացվել կամ նվազեցվել: Օրինակ՝ որպես փաստարկ է բերվել այն, թե ներմուծման քվոտան ամբողջովին չի օգտագործվել: Սակայն՝ բոլոր դեպքերում քննախմբերը մերժել են նման փաստարկները: Օրինակ՝ չօգտագործված քվոտայի դեպքում քննախումբը եզրակացրել է, որ քվոտան բոլոր դեպքերում բարձրացնում է գործարքի գինը և ներդրումների տեսանկյունից ստեղծում է անորոշություն: Հետևաբար՝ միարժեք է, որ քվոտան, նույնիսկ եթե լիովին չի օգտագործվել, գրոյացրել կամ նվազեցրել է բողոքող երկրի օգուտը⁷:

Չխախտման բողոք

Առաջին հայացքից կարող է տարօրինակ թվալ՝ ինչու երկիրը պետք է պատասխան տա գործողությունների համար, որոնք իր ստանձնած պարտավորություններին չեն խախտում: Չէ որ ԱՀԿ պայմանագրերը պարունակում են կողմերի իրավունքները և պարտավորությունները, որոնց շուրջ երկրները պայմանավորվել են բանակցությունների արդյունքում:

Պատճառը նրանում է, որ միջազգային պայմանագրերը չեն կարող կանխատեսել բոլոր հնարավոր դեպքերը: Հնարավոր է տարբերակ, երբ երկիրը փաստացի չի խախտում իր պարտավորությունները, սակայն գործնականում գրոյացնում է այն օգուտը, որը մեկ այլ երկիր խելամտորեն ակնկալում էր ստանալ ԱՀԿ անդամակցությունից:

Չխախտման բողոքը հաջողության հասնելու համար պետք է միաժամանակ բավարարի հետևյալ երեք պայմաններին (ա) բողոքարկվող միջոցառումը պետք է իրականացվի երկրի կառավարության կողմից (եթե միջոցառումը իրականացվում է մասնավոր կազմակերպության կողմից, և կառավարությունը ակտիվորեն չի նպաստում դրան, ապա այդ միջոցառումը չի կարող դառնալ բողոքարկման առարկա), (բ) երկիրը պետք է փաստացի օգուտ ստացած լինի, (գ) նշյալ միջոցառման կիրառման հետևանքով նշյալ օգուտը պետք է գրոյացված կամ նվազեցված լինի:

Իրավիճակի բողոք

Նման տիպի բողոքի ներառումը նպատակ ուներ ընդգրկել այնպիսի արտակարգ իրավիճակներ, ինչպես ընդհանուր տնտեսական անկումը, բարձր գործազրկությունը, արտահանվող հիմնական ապրանքատեսակների գների անկումը, վճարային հաշվեկշռի մեծ պակասորդը և այլն: ՄԱԳՀ-ի շրջանակում մի քանի անգամ երկրները փորձել են իրավիճակի բողոք հարուցել, սակայն, դրանցից և ոչ մեկի համար քննախումբը Հոդված 23:1(գ)-ի հիման վրա վճիռ չի կայացրել: ԱՀԿ-ում նման փորձեր չեն կատարվել:

⁷ Քննախմբի գեկույց, Ճապոնիա – կաշի 2րդ, 54-56 պարբերություն:

Ավելին, իրավիճակի բողոքների առնչությամբ բացասական կոնսենսուսի սկզբունքը չի գործում քննախմբի կամ Բողոքարկման մարմնի վճռի ընդունման և հակազդող միջոցների կիրառման նկատմամբ:

